ՏԵՂԵԿԱՆՔ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 11. **Կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման հիմնական պահանջները**

4. Մրցույթի ներկայացվող տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն անվտանգության, աշխատանքի ու շրջակա միջավայրի պահպանության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և արտադրողի կողմից նախատեսված լինեն տվյալ տեսակի փոխադրումների համար:
Ներհամայնքային փոխադրումների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:
Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական փոխադրումների կազմակերպման համար մրցույթին ներկայացվող մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. **Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիները սպասարկման իրավունքից զրկելը**

գ.1) սույն օրենքի 13-րդ հոդվածի երկրորդի առաջին մասում նշված պայմանների խախտումները.

Հոդված 13. **Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիներին և սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող ընդհանուր պահանջները**

2.1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը մրցութային եղանակով արդեն ընտրված և կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև օպերատորների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շահագործվող ներհամայնքային կանոնավոր երթուղիները 2023 թվականի հունվարի 1-ից հետո ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու կամ փոխարինելու դեպքում դրանք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հոդված 14. **Ուղևորների և ուղեբեռի կանոնավոր փոխադրումների կազմակերպումը**

3. Փոխադրումների ընթացքում հաշմանդամություն ունեցող ուղևորներն իրավունք ունեն օգտվելու հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված տեղերից: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելու ընթացքում ավտովարորդները պարտավոր են աջակցելու հաշմանդամություն ունեցող ուղևորներին (ներառյալ ֆիզիկական աջակցությունը և տեղեկատվության տրամադրումը)՝ օգտվելու ուղևորափոխադրման ընթացքում օրենքով սահմանված իրենց իրավունքներից:

Հոդված 15. **Ավտոկայարանային գործունեության կազմակերպմանը ներկայացվող ընդհանուր պահանջները**

4. Ավտոկայարանային գործունեության կազմակերպումը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին, որոնք սահմանվում են Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգով:

Հոդված 23. **Ուղևորների իրավունքները և պարտականությունները**

7.1 Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական փոխադրումներից օգտվելիս հաշմանդամություն ունեցող ուղևորն իրավունք ունի ծանրոցից և ուղեբեռից բացի իր հետ անվճար փոխադրելու նաև աջակցող միջոցներ և/կամ դրանց մաս կազմող սարքավորումներ: